

ԲԱԺԱՆՈՒ ԿՆՆՈՒԹԻՒՆ

Պոչկարիտյ հասկար  
 սարկիսէ 12 ձ.  
 վեցանկայ 6  
 Ա. աստանկանի  
 հասար սարկիսէ 15  
 վեցանկայ 8  
 Կարկիսի հասկար  
 Տարկիսէ 3 ձ.  
 վեցանկայ 1.50  
 ԿԱՆԹԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Ծանոցութեան տողը ստա-  
 թիս երեսին հասկար 40 մ.  
 իսկ վերջին երեսին հա-  
 մար 20 սանթիմ է. երեքին  
 սանթի մեզանկերու հասկար  
 20 մ. զեղը կրչայ .

Վառնայի հասկար ձեռքէ 10 սանթիմ

# ՇՆԱԲԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇՆԱԲԹ ՕՐԵՐԸ

ՇՆԱԲԹԻՄԻ ԼՈՐ ԲԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏՔ Է ԿԱՆԵՐԻ ՎՃԱՐԵ

Չարժուի եւ որո՞ւ զո՞վն  
 իմ բարոյս քանիսն հասց.

Редакция на вѣстникѣ  
 «Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)

«Պոչկիսի» հոջին տրուի

Արտասանութիւն ձեռքէ

( 20 ՄԱՆԹԻՄ )

Պոչկարիտյ հասկար ձեռքէ  
 ~ 15 ՄԱՆԹԻՄ ~

## Պ Ա Տ Ջ Ա Ռ Ը Չ Ը Մ Ի Ա Ն Ա Լ Ը Չ Է

Շատ անգամ և շատ մարդիկ  
 կրկնել և կրկնում են թէ՛ մեր  
 յեղափոխութեան չը զօրեղանա-  
 լու պատճառը մի քանի յեղափո-  
 խական կուսակցութիւնների գո-  
 յութիւնն է ։ Ըստ իս, այդ բոլո-  
 րովին սխալ կարծիք է . ես հա-  
 ճամոզված եմ որ եթէ մեր բոլոր  
 յեղափոխական անուն կրողները  
 էլ ի մի ձուլվեն, կրկին յեղափո-  
 խական զօրութիւնը այն պէտք է  
 լինի, ինչ որ այսօր է ։

Յետոյ կան մարդիկ, որոնք  
 հաւատում են թէ՛ երբ մեր յե-  
 ղափոխական կուսակցութիւնները  
 միանան, այն ժամանակ ամբողջ  
 հայ ժողովրդը համակրութեամբ  
 պէտք է վերաբերվի յեղափոխու-  
 թեան ։

Այս էլ բոլորովին սխալ կար-  
 ծիք է ։ Այդ պարագայում էլ  
 հայութիւնը նոյնչափ պէտք է  
 համակրի յեղափոխութեան, որ-  
 չափ այսօր է համակրում ։

Ոչ, մեր յեղափոխութեան չը  
 զօրանալու միակ պատճառը այն  
 է, որ մեր յեղափոխական վարիչ  
 մարմինները կազմողները իրենք  
 «յեղափոխականներ» չեն, եւ,  
 քանի որ մեր յեղափոխութեան  
 վարիչները իրենք յեղափոխա-  
 կաններ չեն, յեղափոխական  
 զօրծն էլ չի կարող ոգեւորիչ, հը-  
 րապուրիչ լինել, ու համակրող-  
 ների թիւն էլ չի մեծանայ ։

Ոչ մի ժողովրդի մէջ յեղափո-  
 խական տիտղոսը այնքան չարա-  
 չար կերպով չէ չռայվել, որ-  
 չափ հայերիս մէջ ։ Ամէն ազգի  
 մէջ յեղափոխական տիտղոսը  
 ձօնվել է այն մարդկանց, որոնք  
 իրենց կեանքը և ինչքը միշտ  
 վտանգի են ենթարկել, իսկ մեր  
 յեղափոխականները 95ը այդ  
 տիտղոսին արժանաչել է միայն  
 թերթ կարգալով ու պատու թիւն  
 և կռիւ խօսքը արտասանելով .  
 արտասահմանում բռնալով, իսկ  
 ծածկաստանում և Ռուսիայում  
 շշնջալով ։

Այսօր մեր ժողովրդի մէջ յե-  
 ղափոխականներ են ճանաչվում պ.պ.  
 Չերազ, Փաշայան, Նոյնիսկ Զո-  
 բանեան, եւ այս կարգի շատ  
 ուսուսայրեր ։

Յեղափոխականներ են ընդուն-  
 վում նաեւ Բարկէնները, Սերոփ-  
 ները, Սէրէմճեանները, Մուրա-  
 ները և Կարօները ։ Խնդրեմ ա-  
 սացէք, միթէ այս յեղափոխա-  
 կան պաշտարի սխալ ըմբռնու-  
 մի արդիւնքը չէ՞ ։ Խնդրեմ ա-  
 սացէք, Բարկէնները և Փաշայ  
 եանները կարող էին միմեանց  
 հետ միանալ և գործել ։ Ի հար-  
 կէ ոչ, իսկ եթէ միանային ի՞նչ  
 գործ կը գար—յեղափոխութիւ-  
 նը կը մեռնէր ։

Մենք միութեան դէմ չենք,  
 ըսյց ցանկանում ենք որ Բար-  
 կէնները և ժիրայրները միանան,  
 որ կուսակցութեան որ պատկա-  
 նելիս լինին նրանք . այդ հոգ  
 չէ ։ Եթէ Դաշնակցութեան մէջ  
 Բարկէնների և Սէրէմճեանների  
 թիւը պակսի ու յեղափոխութեան  
 զեկը մնայ խօսքի մարդկանց ձեռ-  
 քում, Դաշնակցութիւնն էլ պէտք  
 է քայքայվի ։ Եթէ Հնչակեա-  
 նութիւնը այլևս անկարող է ժի-  
 րայրներ և Մուրառներ տալ,  
 նա բոլորովին չի կարող վերա-  
 կանգնել իբր մի յեղափոխական  
 մարմին ։

Բաց ասենք և ոչ ամաչենք .  
 այսօր յեղափոխական վարիչ հա-  
 մարվածների մէջ շատ քիչ մարդ-  
 կայ, որ քաջութիւնը ունենայ  
 բուն կռիւ վայրը գնալու, ոչ մի  
 այն վարիչների, այլ և երկրոր-  
 դական, երրորդական անդամնե-  
 րի մէջ ։ Ուրեմն ի՞նչպէս կարող  
 է հայ յեղափոխութիւնը զօրեղա-  
 նալ, նոյն իսկ եթէ գրանք մի-  
 անան ։ Ի՞նչպէս կարող է հայ յե-  
 ղափոխութիւնը զօրեղանալ, երբ  
 այդ գործը վարողները մեծ մա-  
 սամբ հաւի սիրտ ունեն, թերեւս  
 մարդկային շանճարեղ ուզեղի  
 հետ ։

ՎԱՐԴՈ

## ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ԱՐ

«Ազգ մը կը բաղկանայ իր  
 մեծագոյն գոտած հասարակ դասէն,  
 որուն պէտք է անշուշտ տալ սոսն  
 դարար և պարզ կերակուրներ, ու  
 իր զարգացեալ - դասէն, որուն  
 պէտք է տալ թէ սննդարար «կե-  
 րակուր, և թէ քաղցրեղէն . հայ  
 ազգն ալ ունի վերջապէս իր  
 զարգացեալ դասը, ունի բաւա-  
 կան թուով անհատներ, որոնք  
 անհրաժեշտ պէտքը կը զգան  
 «նուրբ» սնունդի եւն» ։

Ահա այս առիթով պ. Զօբան-  
 եան կուզէ յիշել պ. Սարգսեանի  
 «Մուրճ»-ի մէջ, Զօբանեանի թարգ-  
 մանութիւններուն համար բրած  
 դիտողութիւնները ։

Արդեօք Զօբանեանի հասկցում  
 մտաւոր նուրբ սնունդը ո՞րն է...  
 Արդեօք Տարվի՞ն ուեյի նուրբ  
 սնունդ կը մտաւորարարէ մարդ-  
 կային մտքին, թէ Քրանտական  
 էն մենծ սիրային բանաստեղծը ։

Գրական քաղցրեղէններով, ան  
 ալ ներկուած, Պօլսոյ զարգա-  
 ցած հոշակեալ գասակարգը 40  
 տարիներէ ի վեր կը կերակուրի  
 սակայն թող մեզի ներուի ըսել  
 որ այդ զարգացած յորջորջուած  
 դասը զուրկ է գրական և լայն  
 զարգացում է ։ Զուրկ է, որով-  
 հետեւ մարդկային մտքի զար-  
 ցացման լայն գաղտնաբեր երբէք  
 ըմբռնած չէ ։

Հոշակաւոր Արթին փաշայի  
 ու թ հարիւր գրքերէն հինգ հա-  
 ղիւրը Քրանտական վէպ քաղց-  
 րեղէններ ելան, իսկ զուտ գիտա-  
 կան և ոչ մէկ գիրք . ու Արթին  
 փաշան լայնօրէն զարգացած  
 մարդ մը չէր և չէր կրնար բլ-  
 լալ, որովհետեւ մտքին շատ «ա-  
 նուշ» մտաւորարարած էր ։

Ռուսական գրականութեան մէջ  
 Պ. Զոպանեանի հասկցած մտաւոր  
 անուշեղէնէն շատ քիչ կ'գտնուի  
 սակայն այդ գրականութիւնը . այ-  
 սօր էն առողջը և օգտակարը կը  
 համարուի ոչ միայն կեռնցիկնե-  
 րու համար, այլ և եւրոպայի զար-  
 ցացած, փասակար անուշ է մըտ-

քին աղանանքը չը թափած դասա  
 կարդին համար ։

Ժողովուրդի մը, երբ մեր վի-  
 ճակին մէջ կը գտնուի, գրրա-  
 գէտները աշխատելու են, ե-  
 թէ իսկպէս պարտականութիւն  
 կը զգան իրենց ազգը լուսաւորե-  
 լու ։ մեծամասնութեան վրայ հո  
 գալու և անոր մտաւոր պահանջ-  
 ներուն բաւականութիւն տալու .  
 բայց ոչ թէ խամաճուկներ զու-  
 արճացնելու ։ Ի հարկէ ոչ ոք կըր-  
 նայ գրագէտի մը ստիպել որ մե-  
 ծամասնութեան համար անպէտք  
 բաներ չը հրատարակէ . բայց ա-  
 մեն մարդ իրաւունք ունի մե-  
 ծամասնութեան հակացնելու այդ-  
 տեսակ հրատարակութեանց ան-  
 պէտքութիւնը ։

ԿԷՏ

## ՈՒՐԻՇՆԵՐ ԱՆ ԿԱՆ

«Շարժում» իր վերջին թիւերու  
 մէջ մտնանիչ բրաւ որ արտասան-  
 մանի մամուլին մէջ գրական քննա-  
 դատութիւնը կը պակսի ։ Այսօր ու  
 րախութեամբ կուգանք յայտարարել-  
 ու որ վերջին թիւ «Համալսարան»ի  
 եւ «Անահիտ»ի մէջ քննադատական  
 բաւական ընդարձակ յոգուածներ  
 կան ։ «Համալսարան»ը քննադատած  
 է «Արտեմիտ»ը և «Բանասէրը» իսկ  
 «Անահիտը» թէքէանի եւ Եարճան-  
 եանի բանաստեղծութիւնները ։

Մենք ամենեւին յաւակնութիւնը  
 չունինք կարծելու, որ այդ քննադա-  
 տականները իրենց երեւումով կը պար-  
 տին մեր յոգուածներուն . այլ ու-  
 րախ ենք, որովհետեւ այդ քննա-  
 դատականները կուգան փաստելու  
 թէ մամուլի քննադատութեան բա-  
 ցակալութիւնը ուրիշ խմբագրութիւն  
 ներու մէջ ալ զգացուած է իսկ ցա-  
 ւի մը, վէրքի մը գոյութիւնը երբ  
 շատերու կողմէ կը հաստատուի . այն  
 ժամանակ անոր պարմանելը գիւրիւն  
 կըլայ ։

Մեր կարծիքով արտասանմանի  
 հանդէսներէն միայն «Համալսարան»ի  
 եւ «Անահիտ»ի մէջ կրնան բարձա-  
 կողմանի եւ անկախ քննադատու-  
 թիւններ նրատարակուիլ մեր մամու-  
 լի մասին . եւ շատ լաւ պիտի բլար,  
 եթէ այդ հանդէսներուն խմբագրու-  
 թիւնները մասնաւորապէս այդ ճիւ-  
 զին կարեւոր տեղ մը տային իրենց  
 հանդէսներուն մէջ ։

Եթէ քննադատութիւնները կրճով չը գրուին, գործերը քննադատութիւն առանց անձնական համակրութեան եւ ատելութեան ազդուելու, համոզուած ենք թէ՛ արտասահմանի մամուլը շատ պիտի շտկուի, եւ չիտական բազար մը բլլալէ պիտի զազրի: Ի հարկէ քննադատողներն ալ կարող եւ բան հասկցող մարդիկ պիտի ըլլան:

ՌՈՒՍ ԶԻՆՈՒՈՐՈՎԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ռուսական խռովութիւններու միջոցին նոր աչքի զարնող փաստ մը երեւան եկած է, որ մինչեւ օրս ամենեւին տեղի ունեցած չէ: Ատ փաստը ան է որ թէ սպաներ և թէ պարզ զինուորներ համաձայնած չեն ամբոխի վրայ զէնք պարպելու: Բեթերսպուրկի քաղաքներու կարեւոր սպաները, որոնց հրաման քաջած էր ցոյցին օրը ցուցալայրը գտնուելի ամբոխը հալածելու համար, մերժած են մասնակցել այդ գործին և յայտարարած են թէ՛ իրենք պատրաստ են հրաժարական տալ, բայց ոչ ամբոխի վրայ յարձակում գործել: Այդ ուսական այն քաղաքներն են, որոնք միշտ ամենակատարի և ամենաանխնայ կերպով վարուած են ռուս խռովարարներուն հետ: Թույլ քաղաքին մէջ սպայ մը զօրքին կը հրամայէ զէնք պարպել ցուցարար գործաւորներուն վրայ. զօրքը անշարժ և լուռ կը մնայ. սպան զուրս կը կանչէ և թափանց և անոր կը հարցնէ զինուորներուն անհնազանդութեան պատճառը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՃԱՍԿԱՆԱԼԻՆ

ՄԱՅ 11  
ԳԼՈՒԽ 2.

Ապրիլը վերջանում էր. վաճի պար աղջներն ու այգիները ծաղիկներով էին զարդարվել. գարուն էր հայոց աշխարհում. գարուն արթնած, թարմացած, ստեղծագործութեան մէջ նոր երիտասարդական եռանդ ստացած բնութեան մէջ: Սակայն վանեցին զարնան գալով ուրախ չէր. նրա սրտում միշտ ձմեռ էր, միշտ սեւ գիւշեր: Մի երկու շաբաթ էր որ լուր էր տարածվել թէ թուրքերը պատրաստվում են հայերը կոտորել. վասպուրականի թէ գիւղացին եւ թէ քաղաքացին չէին դուրս գալիս գարունը վայելելու, բնութեան հետ զարնան գալուստը ածելու: Երեք շորս ամիսը արդէն անգնում էր Զարուհու եւ վահէի վանում տեղ զաւորվելուց յետոյ. այդ կարճ ժամանակում բաւական գործեր էին կատարվել: Մի երկու մասնիկներ էին սպասվել. յեղափոխական կազմակերպութիւնը զօրեղացել էր երկու սեռի մէջ էլ: վահէն ու Զարուհին, այդ երիտասարդ անձնուէր, անձնազոհ ամուսինները պաշտելի էին զարձի վանայ հայ հասարակութեան համար: Մանաւանդ կիները եւ օրորողները Զարուհուն երկնքից իջած

ենթապան կը պատասխանէ որ՝ զինուորները հրազէն չեն պարպեր, որովհետեւ երկու տարի յետոյ իրենք ալ նոյն գործաւորներուն մէջը պիտի ըլլան ու չեն կրնար իրենց եղբայրներն քննակաշար ընել: Այդ պատասխանին վրայ սպան ատրճապակը կը հանէ և ևնթապան գնդակաշար կը ընէ:

Զինուորները իրենց սիրելի անմիջական հրամանատարին և ընկերոջ եղբուական մահը տեսնելով՝ իսկոյն կը յարձակին և սպան սուրիններու վրայ կը բարձրացնեն:

Մոսկուայի մէջ ալ 21 սպաներ ձերբակալուեցին. որովհետեւ չեն ուզած իրենց զինուորներուն հրամայել ամբոխի վրայ զէնք պարպելու:

Այս փաստերը կը ցուցնեն թէ ազատասիրական ձգտումները և տենչերը ուսական ոչ միայն սպաներու, այլ և հասարակ զինուորներու սրտերուն մէջ ալ թափանցած է:

Ռուս կառավարութիւնը մինչեւ օրս իր ամբողջ յոյսը զինուորական դասակարգին վրայ դրած էր. Ռուս խռովարարներն ալ աւելի այդ դասակարգէն կը վախճային: Այսօր ըստ երեւոյթին Ռուս զինուորականութիւնը սկսեց է Խասկնալ թէ՛ պարագաներու համար իր եղբայրները սպաննելը ոճրագործութիւն է:

Այդ հասկացողութիւնը ի հարկէ ռուս կառավարութեան շատ մեծ անհանգստութիւն կը պատճառէ, իսկ ազատամիտներուն մեծ ուրախութիւն:

Հիւլի

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ռուսոմոլ 18 մարտ 1902

«ՆԱՐԺՈՒՄ»-ի 400րդ թիւին մէջ տեղ է Ս. Մանուկեան ստորագրութեամբ թղթակցութիւն մը կարգացրի. պարունը իր այդ գրութեամբ կուզէր մոխիր փչել կարգ մը ճշմարտութիւններու երեսին, զորս սա՛ է առաջ առ թիւր ունեցած է ի զանոնք հրատարակելու «Շարժում»-ի մէջ: Ս. Մանուկեան, իբր ընթերցարանի շահերուն նախանձախնդիր մէկը !!! անշուշտ թոյլ չի պիտի տար իրեն զիջանելու բոլոր այն դիտողութիւններուն զորս դժբաղդարար շարունակ արձագանք կը գտնէին թէ «Շարժում» և թէ «ՆԱՐԺՈՒՄ» թերթերէն: Պարունը յոյսուածագրի մը ամենատարական պարկեշտութեան զուրկ իր անուանարկիչ, վրան բաց գրութեան մէջ կը ըսէ. — 1900ի տարեկան բնդհանուր ժողովէն ասագին ընթերցարանի կից սրճարանը դադարած է ու է առնչութիւն ունենալ ընթերցարանէն և իբր թէ ես ալ շեմ գիտեր ի՞նչ գիտումով անգիրանալ կեղծած եմ խոստովանելու համար այս պարագան: Մարդ սկամայ կը սահմակի այս տոչբերը կարգալու ժամանակ. մտեղը ուղտի չափ

խոչորլած է: Պ. Մանուկեան այդ որոշումին այլարանական մեկնութիւն մը կուտայ իրողութիւնները անթեղելու համար: Եթէ երբէք 1900 տարւոյ ընդհ. ժողովի ատեն սրճարանի մասին ու է որոշում տրուած է նէ, այն ալ միայն անոր հասոյթին կանոնաորմանը համար եղած է որ յաճախ դատապարտուած էր հոն ծառայողներէն գրպանուելու: Այդ ժողովին մէջ էր որ որոշուեցաւ այնուհետեւ մատակարարը իր հաշւոյն բանեցնէ պայմանաւ որ ալ ան ընթերցարանի ծառայութեան համար որ և է վարձք չ'սպասէր: Ըսել է թէ այս հաշուով փոփոխութիւնը սա միայն եղաւ, որ փոխանակ հասոյթը ընթերցարանին պատկանելու այժմ անհատկ մը կը պատկանի: Եւ ո՞վ կրնար մեղադրել այս պարագան. քանի որ վեր վար համաձայնեցին եւ սահայս է ընթերցարդ որ պարունը պոռտախօս կոկորդով կը ըսէր: — Ընթերցարանը դադարած է ու է առնչութիւն ունենալ սրճարանէն: Այս՝ ճիշդ է գրամական ու է առնչութիւն չունի բայց բարոյական: Պ. Մանուկեան սրբի տեղ մը ծանօթութիւնով մը կը ըսէ. — 25-րդ ծնողները իրենց տղայոց ետեւէն չեն պտտիր հասկնալու

մի հրեշտակի տեղ էին դնում. պատուներն անգամ Զարուհուց ակնածում էին, նրա քաջութեան, անվախութեան եւ խելքի վրա հիանում: Տաճկական գիւրութեան մէջ իր պատական ամբողջ ձգտումները կորցրած հայուհին Զարուհու մէջ զբոսնում էր այն՝ ինչ որ երեւակայել չէր կարող երբէք: Նա Զարուհուն տեսնելով իր նաճին ընդունակութիւններով ըմբռնում էր թէ՛ ինքը շատ բան է կորցրել, շատ ետ է մը նացել: այնքան ետ, որ անասուններին է ժողովել: Ու բնական էր որ իր կատարելապի քրոջը սէտք է պաշտէր եւ պէտք է ձգտէր նրան հասնելու: Զարուհին այդ նկատում էր եւ իր ուժերի չափով աշխատում այդ հիացմունքից օգտվելու. ոչ անձնապէս, այլ ի նպաստ իւր ընկճված քոյրերի: Նա ձմեռ գիւշերն էր շարունակ զանազան տներ էր գնում վահէի հետ. վահէն այրերին էր գլխին հաւաքում, ինքը կանանց եւ օրորողներին: Բայց գարունը գալուն պէս, մանաւանդ երբ կոտորածները շրջակայքը լսվեցին, Զարուհու այցելութիւնները սահմանափակվեցին: Այժմ Զարուհին շարունակ տանն էր լինում, իր պառաւ նանէի մօտ, որի միակ աղջիկը նազուն, Զարուհու ալ բազուկն էր յեղափոխական պրօպագանդայի խնդրում, և ամենափոքրի ընկերուհին: Զարուհին տանից դուրս չէր գալիս ոչ նրա համար, որ ինքն էր վախնում, այլ չէր ուզում կոտորածի մղաձանձիլ տակ գտնուող սարսափազար ընտանիքներին մէջ իր ներկա-

յութեամբ մի նոր վախ աւելցնել: Մի կիրակի առաւօտ, Զարուհին մենակ էր տան մէջ. նստել էր պարտէզում. ծաղիկներով բեռնաւարված կեռասներու տակ և մասնում էր: Նանէն եկեղեցի էր գնացել աղօթելու, որ Աստուած թուրքի սիրաբանութիւնը, ու նա վաղ գայ կոտորածից: վահէն մի կարեւոր գործի համար գնացել էր ընկերներին մօտ. իսկ նազունը նոր թերթեր էր տարել իր ամենասրտոտ բարեկամուհիներին: Մտածում էր Զարուհին կոտորածի մասին, նա սարսափ էր երբ աչքին պատկերանում էին կոտորածի քառմանի տեսարանները, գոփոխյին աղմուկը, կանանց և մանուկների ձիչերը: ինքը կոտորած չէր տեսել, բայց կարդացել էր. կարգալը միայն սոսկացրել էր, հայա իրականութիւնը ինչ կարող էր՝ անել: — Ո՞վ բնութիւն, հառաչելով շընջաց նա-որչափ գեղեցիկ ես դու, մանաւանդ հիմա-ծառերը զարդարվել ու պճնվել են. թաշուկները իրենց ուրախ ճղվողով աշխարհն են զնգզնգազնգում, ամենահասարակ միջատն անգամ դուրս է եկել իր խաւարը ընդից և ապրում է, ապրում է գոհ ու եռանդով: Մարդիկ, ազատ մարդիկ վայելում են քեզ իրենց բոլոր կենսական ուժերը լայրած և միայն հայը, խեղճ հայը անկարող է քեզ վայելել վայելել այնպէս, ինչպէս որ պէտք է նա ամեն գարուն մահ, հրդեհ և թալան է սպառում. նա ոչ սան մէջ է հանգիստ, ոչ գուրսը: Գարնան հետ նա չէ երգում, այլ սարսափելի երազի մէջ սգոյ, վախի, սարսափի հառաչներ է արձակում: Հառաչանք ոչ օրով, ոչ ամիսներով

և ոչ տարիներով. հառաչանք դարբերով, սերնդէ-սերունդ, ժառանգաբար Մինչ Զարուհին այդ ինքնախօս վիճակի մէջ էր գտնվում, արցունքի խոչոր կաթիլները մարգարտի պէս զլրվում էին նրա այտերի վրայով. նազունը կամացուկ պարտէզ էր մտել և եկել տառապող ընկերուհու մօտ կանգնել: վերջապէս նա այլ ևս համբերել չը կարողանալով. գրկեց իր ընկերուհուն ասելով. — Ինչո՞ւ կը լաս, Զարուհի: Այո, հառաչելը մեզի դարբերով վիճակուած է. ժառանգաբար, Բայց ամեն հառաչանք և տառապանք վերջ մը ունի. և մերս ալ պիտի ունենայ: Անցնող սերունդները այդ հառաչանքին և տառապանքին ծանրութիւնը զգացած չեն և այնպէս մեզի թողած են: Այսօր մենք կ'զգանք և ճիգեր կը թափենք վերջ դնելու այդ տառապանքին: Մենք եթէ չը յաջողինք ալ, գոնէ մեզի հետեւող սերնդին ասանքած կըլլանք որ տառապանքին առջեւ ոչ թէ ընկճուելու, այլ զայն վերջացնելու ճիգեր թափելու է: Եթէ մեզի վիճակուած չէ գարունը, բնութիւնը և կեանքը վայելել, ինչպէս կը վայելին ուրիշ տեղեր ազատ մարդիկ. գոնէ մեզի վերջը եկողները պիտի կրնան վայելել, և մի՞թէ այդ համոզումը արդէն չի բաւեր մեր տառապանքն ալ աւելի թեթեւեցնելու, քան մեր նախորդներուն էր:

(Շարունակելի)

համար թէ՛ սուր կերթան, բայց իս անկարելի պիտի ըլլայ տղուն սրճարան երթալը արգելել:

Ենթադրեցէք որ այս տղերքը ստորագրողը ուսուցիչ մըն է, որուն յանձնուած է ապագայ սերունդը պատրաստելու փափուկ գործը: Պ. Մանուկեան կամ արգէտ մը ըլլալու է և կամ շահախնդիր մէկը որ չուզեր հասկնալ թէ բնութեան օրէնքով ամեն երեւոյթ իրեն պատճառը ունի: Կը հարցնեմ իրեն. ինչո՞ւ համար այդ տղոցմէն և ոչ մին կը յանդգնի որ մը ուրիշ սրճարան մը երթալ խաղալու, պատճառը ի՞նչ է. փիլիսոփայ ըլլալու պէտքը չիկայ այս հարցը լուծելու համար. շատ պարզ է որովհետեւ այդ վայրը ընթերցասիրահին կից անոր յանդիմանական մի մասը կը կազմէ և հոն յաճախող տղան խաղալու համար երբէք չի կասկածուիր, ահա այս է պատճառը: Պարոն, հանդիպած էք արդեօք երբ օտար դէմք մը ներս մտնէ այդ յարկէն. իսկոյն ի՞նչ պէս ածապարանօք թղթեր կը վերցնեն ու կսկսին մէկիկ մէկիկ ընթերցասիրահը քաշուիլ: Կը յուսածք որ այսչափ զգուշաւոր իսկ զայդոնք կարենալին պիտի ուրիշ սրճարան մը յաճախել. թող վարչութիւնը փակէ այդ յարկը այն տան պիտի տեսնաս թէ խաղաժողովիւնը տղոց մէջէն պիտի վերնա՞յ մէջ ոչ: Պարոնին ջիզերուն դպած եմ կըր երբ ըսած եմ թէ խաղարանը իր արդուակով երբեմն անկարելի կընէ ընթերցասիրահին մէջ կարգալը: Այս պարագան անգամ մըն ուլ հաստատելու համար մէջ կը բերեմ քանիցս անգամ վարչութեան ըրած դիտողութիւնները մատակարարին որ լռեցնէ խաղարանին ազմուկը. այս որ վարչութեան ներկայութեան կըլլայ, հազա անոր քացակալութեանը ինչե՞ր չեն ըլլար:

Յետոյ ուրիշ տեղ մըն ալ կանանց ընթերցանութեան համար յատկացուած օրերը կը ջանայ վերագրել Տիվնանց խնամակալութեան անցեալ տարուայ մայիս ամսուայ երկու-երեք ժողովներուն:

Այս օրինակ վրան բաց սուտին մարդ կախալայ կը շուարի ինչ պատասխան տալը: Պարոն Մանուկեանը կերեւի թէ 98ի և 99 տարիներուն բնաւ ընթերցարան յաճախած չէ. թող վարչութեան հին անդամները վկայեն ասոր: Ձէ, պարոն չէ, դուք այդ ձեր գրութեամբ ուրիշ բան ըրած չեղաք եթէ ոչ կրկնակի քաջայարեցիք օղաքը իրենց անպատուաբեր ճամբուն մէջ:

Թող այժմ հասարակութիւնը բննէ թէ մեր մէջէն ո՞վ է ստախօսը:

Նժդեհ

Փրովիտէնս, 17 Մարտ 902  
Պաշտելի «Շարժում» 380 թուոյն մէջ Գոռայր ստորագրութեամբ Ռուսական քահանայնորդ խորագրով յոյուածը ու շաղկապիւնս գրաւեց և պատեն արիթ ներկայացուց ինչ:

Ուստի ներեցէք ինձ օրինի վարչո սր եւ ալ Քոստանցայի քահանայի կեանքէն գրեմ: Ռուսական Քոստանցայ քաղաքը «Շարժում» ինթերցողներէն շատերուն ծանօթ է արդէն. քաղաքի մէջ կայ մտաւարապէս հարիւր տուն հայ բնակչութիւնը, որոնցմէ մի քանին վաճառականութեամբ կը զբաղին, մեծամասնութիւն կը կազմեն իջնակարանը եւ քանի մը հատ ալ մանրավաճառ, կայ նաեւ 4-5 հարիւր պանդուխտ եղբայրներ, և անոնց մեծամասնութիւնը ցորենի մթերանոցները ու նաւահանգիստը կախատին. և մընացեալ գասակարգը այլ և այլ սրահեաններով կը զբաղին: Բայց երբեմն անտանելի իշուատութեանց կենթարկուի գործաւոր գասակարգը, անգործութեան պատճառաւ. և շատ քիչեր կարող կըլլային իրենց օրական պարէն հայթայթել:

Քոստանցայի մէջ հայերը ունին Ս. Աստուածածին անուամբ փայտաշէն եկեղեցի մը. ունին նաեւ նորաշէն Հայկազեանց դպրոց մը երկ յարկ. առաջին յարկին մէջ կուսանէին սաներ և անուսանողներ հոգատար գասատուի մը ձեռնամբ և սրոնց թիւը մօտաւորապէս հարիւր անցած էր. իսկ կէս յարկն ալ կը բնակին տեղւոյն քահանան և Ժամակոչը: Երկրորդ յարկին վրայ կայ բնարձակ սրահ մը որ այժմ Բարեգործական ընկերութեան տրամադրութեան տակ կը գտնուի ընթերցարան անուանով, բայց երբեմն օտուսի սրահ ալ կընեն որուն մասին եթէ պէտք ըլլայ պատրաստ եմ փաստելու:

Ուստի դառնանք մեր բուն նպատակին. ժողովուրդին շատ քիչեր են զարգացած և ևնացեալ մարդոց սրտերէն թէեւ հայրենասիրական զգացումները պակաս չեն, բայց մարդուն պակասն է որ այդ ազնիւ սրտերէն կամաց կամաց զգացումներն պիտի մարի:

Հայաստանի ժողովուրդն իր նորնական աւանդութեան համեմատ քահանան իբրեւ քարոզիչ եկեղեցոյ և գրուի ժողովուրդի կը ճաննայ, և յաճախ անոր այցելութեան, խրատիչ խօսքերուն ու ոգևորուած քարոզներուն կարօտը կը քաշէ, զժողովուրդը այդ ամենէն ալ զուրկ է. որով հետեւ ներկայ կոկոզաժող քահանան, հինգ տարէն աւելի է որ Քոստանցայ եկած է ու թէ ժողովուրդին հաճութեամբ, այլ ստորինակ փախուտի ճանապարհով մը Սիլիստրայէն (անշուշտ Սիլիստրայցիներէն կը յիշեն իրենց նախկին քահանայ Պարտիզակցի Գ. Յակոբ Գառաւորեանը) քաղաքը գալածէն ի վեր բնաւ չփոխ չէ ունեցած պանդուխտներուն հետ և ոչ ալ պիտի ունենայ, ինքնարեւորաբար բնաւ այցելած չէ պանդուխտի մը սրճարանը գամ անոնց սենեակը, իսկ ոգևորիչ քարոզներ մեղայ Աստուծոյ. սկանճը խօսի տէր պատգոյն, այս ամենը չունենալէն զատ երբեմն շանթահարիչ խօսքեր ալ պակաս չեն (խմբով գաւառացիներ), Շահու աղբիւրը բնաւ չի ժողովուրդը, տաղաւարի և անուսի օրերը գալածատեն կանգուն մը արիւմին մէջէն կը քաշէ և տունը կը գտնէ, բայց ուրիշ տանն ոչ: Միայն քանի մը դէ-

պի պանդուխտները խլամ աչօք նայող հարուստներու տուներէն և ևս նախնութեան զուրս չեղնէր ու այդ պատճառաւ պանդուխտներուն բողոքը անլսելի կը մնայ: Թրքաց սօնեբուն օրերը վերարկուն սօթթած սաճկին հիւպոտոտարանը կը վազէ մարդասպանին արեւշատութիւնը բարեմաղթու ըլլալու: Իսկ հայ պանդուխտի մը հիւանդին սենեակը չայցելելու վաւրն զի տեղը անմաքուր և ողբ աղատու է. անոր բոլոր վատ արարքները մի առ մի փաստելով ցուցնելու կը խոստանան «Շարժում» ընթերցողներուն ուրիշ առթիւ գրելու. բայց բարութեան համար ոչ ինչ:

Կորիւն

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

Շումլայի Արժ. Տ. Սորէն Հօր Արժ. Հայր

Վերջերս «Արեւելք» թիւ 3-ի ներկայումս տեսնուած արդար ու իրաւացի դիտողութեան մը ու բողոքի մասին, փոխանակ ասոր անոր նկատմամբ, սրճարանի մէջ ինչուր ժողովուրդեան, և մարտութեան մը տանն ինչուր կանանց՝ անտեղի ժայթքումներ և սպառնական կոկոզներ փոխելու, լաւագոյն ու օրինական կը լինէր, որ զուր Պատրիարքի ու Ազգեկոչը. վարչ. կրօնական ժողովոյ հրամանի ու որոշման չբաւանգանալով, ձեր կրօնական պարտոց մէջ չի թերանայիք և թաղականութեան տանադպրի քրտած՝ յայն անձնատուր եղած՝ ժողովրդեան բողոքը անխուսափելի չի դարձնէիք:

Ձեր արժ. դիտմանը աւելի համոզուելու է, որ մեր հոգեւորականաց նկատմամբ մարդկային թերութիւններէ զերծ՝ գերմարդկային էակներ լինելու համարուն ունեցողներէն չենք, բայց կրօնական ձեւերու և արարողութեանց՝ ձեր հոճոյակատարութեամբ՝ ու է անհատի մը քմահաճոյքի գոհուելուն և ձեր՝ անկշիռ ու անորակի բարոյն ձեւերուն ներողութեանն ալ չենք:

Այսու կը խնդրուի, որ ձեր արժ. զգուշանայ տեղի տալու նամօրինակ երեւոյթներու վերաբերման:

Յարակ ու Վասակ Սիւնի

ԻՐԱՆԻՆԻՔԻ ԽՍՐՈՎՐՈՒԹԵԱՆ

(II)

Իմանալով որ շաշիւրի միջոցաւ ձեզի գրած բաց նամակիս կարեւորութիւն տալ չէք ուզեր, ահաւասիկ այսօր ալ «Շարժում» միջոցաւ կուզամ խնդրել. յուսալով որ պիտի բարեհաճիք հետեւելու նամակիս պատասխանել:

Թերթիդ 20րդ թիւին մէջ 81 ստորագրութեամբ ազգային հոգարարութեան տրուած հանրապրին առթիւ կը յայտարարէք որ՝ թագ. խորհրդոյ անդամներէն մին այդ 81 անձինքները «խոռվարար, ազգային տուրք չի վճարող և անկարեւոր ճանչցուցած է Պ. Էնսթեթթօսին: Արդ բոտ օրինի կը պահանջներ ձեզմէ որ թերթիդ միջոցաւ յայտարարէք նաեւ թագ. խորհրդոյ յոյն անդամին ո՞վ ըլլալը. հակառակ պարագային իրաւունք պիտի ունենանք ըսելու թէ զուր ձեր կողմանէ յերկրած էք այդ պարբերութիւնը:

81 ստորագրողներէն Յակոբ Ազապլար

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Բեթերայուրկի հայերը 50000 բուսլի հանդանուակեր օն Շամախի երկրաշարժէն կալօտելոց համար:

—Վետիս Ղուկասեան իր ծախքով Տիֆլիսի մայր եկեղեցիին բուսլի մէջ եկեղեցական թանգարան մը կառուցեր է. կախողիկոսը այդ թանգարանը արգէն օժտեր է եկեղեցական հանդէսով:

—Մոսկուայի ազգ. եկեղեցիին մէջ ի տես դրուեր են Սեբաստիոյ որբանոցին մէջ շինուած աթոռները որ զրկուած էին որբանոցին նպատող անձերու:

—Օրմանեան տաս ոսկի նուերեր է Եղմիրի ազգ. հիւանդանոցին. այդ հաստատութեան յոբելիանին առթիւ:

—Կը լսուի թէ Պոլսոյ ազգայիններէն մին մտադիր է 1500 տալ մայր եկեղեցիին նորոգութեան համար, սակայն նորոգութեան նախկին ծրագիրէն բաւորովին տարբեր ծրագիր մը առաջարկելով. թաղականութիւնը կաշխատի այդ բարեսէր ազգայինը համոզել իր նուէրը դպրոցներուն տալ, որովհետեւ անոնց չէնքերն ալ նորոգուելու պէտք ունին:

—Կովկասցի ծանօթ նկարիչ Գ. Բաշինջաղեան իր 70 նկարները ի տես դրեր է Տիֆլիսի «Փառքի տաճարին» մէջ:

—Հանգուցեալ Արշակ տէր Միքայէլեանի եղբայրը, եղբոր բաւական հարուստ մատենադարանը նուիրեր է Էջմիածնի վանքին:

—Չուրիցերի մէջ, զանազան նուագահանդէսներու մէջ մեծ յաջողութիւն գտեր է Չարհ Նէրիտեան իր «Պարիզոսի» յատակ ու նշանաւոր ձայնով, որուն մասին զուրիցերական լրագրիւնները մեծ զովեստով կը խօսին: Պ. Շէրիտեան երգչու թեմէն զատ կը հետնուի նաեւ լուսկոթեան:

—Պուլկսրիոյ սյցելու հովիւ Պաղճեան վարդապետի հրոմարականը Պատրիարքարանի կողմէն ընդունուած է:

—Սոյ կաթողիկոսական տեղապահ Կիրակոս Կպիսկոպոս հեռագրով և նամակներով կաթողիկոսի մը անմիջական ներկայութիւնը անհրաժեշտ համարելով. քանիցս խնդրած էր որ խապայիան եպիսկոպոսի ընտրութիւնը կատարուած նկատելով. վաւերացուի և անյապաղ զրկուի իրան ժողովը որոշեր է զրել կաթող. տեղապահին թէ այս մասին արուած նախորդ օրոշում մը արդէն զոյժադրութեան տրուած ըլլալով օրինաց համեմատ նորէն պիտի կատարուի այդ ընտրութիւնը:

— Կրօնական ժողովը հետեւեալ գեղեցիկ որոշումը տուած է. այն եկեղեցականները, որոնք չեն յօժարիր գաւառները պաշտօն ընդունելու, և իրենց մէջ բերած պատճառները չեն կրնար ժողովականներու մէջ համոզում գոյացնել այս մասին, այնպիսիներն իսպառ արգիլուին մայրաքաղաքին և թաղերու մէջ ու է պաշտօն վարելու:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

#### Յ Ո Ւ Ր Ք Ի Ա

Մեծ վէճերը Ատրիանու Պոլսոյ, Բոստֆայի, Սելանիքի և Մանասթըրի վախճաններուն շրջաբերական մը զրկելու է պատուիրելով ապստամբներու դէմ հսկողութիւնը կրկնապատկելու, զանոնք բռնել և խտրել պատմել առանց խաղաղ բնակչութեանը անհանգստութիւն մը պատճառելու: Ապստամբները զսպողները պիտի ըլլան միայն գինուորները և սուտիկանները, առանց թուրք ժողովրդի մասնակցութեան, որպէս զի օտար պետութեանց բողոքներու և միջամտութեանց տեղիք չը տրուի:

— Հասան Թէհմի փաշայի Սելանիքի վախճանը նշանակուիլը մեծ գոհունակութեամբ ընդունուել է եւրոպական պետութիւններու կողմէ որովհետեւ Թէհմի փաշան կը ճանչցուի իբրեւ կրթուած և ճիշդ մարդ: Բարիչի համալսարանէն իրաւաբանութեան տորթորի տիպլումայով աւարտած է և թուրքերէ մէջ շատ կարեւոր պաշտօններ վտարած ու նախարար անդամ եղած է:

#### Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Նախարարապետ Տանէֆ Զարին կողմէ շատ սիրալիր կերպով ընդունուել է:

— Ռուս կարեւոր թերթեր կը գրեն որ եթէ Պուլկարիա ինք չը խառնուի Մակեդոնական գործերուն, թոյլ չը տայ որ Պուլկարիայէն հրօսախուժքեր անցնին, և Մ. Բ. կօմիտէն ազատօրէն գործէ երկրին մէջ, այնմամանակ Ռուսիան ալ պէտք է դադար պարագային Մակեդոնիան չը պիտի ըլլէ:

— Անցեալները Վառնայի մէջ արտակարգ դէպք մը տեղի ունեցաւ հայ կեանքի մէջ: Շաբաթներ առաջ Ռուսներէն հոս կուգայ Յակոբ Մալխասեան անուն Տրապիզոնցի մը: Ինքզինք կը ներկայացնէ Մինաս Օղլիի ընկերներէն և Սինայի բանտէն փախած: Այդպիսով երիտասարդները զինքը կը մեղքնան, բայց այդ իսկական աւազակը, իբրև-

րարիք ընող մարդերէ զանազան հանգերձեղէն կը գողնայ և կանեքեւութեան զինուորները իսկոյն կառավարութեան գիմեցին: Կառավարութիւնը տրագաւար զոյն կը ձերբակալէ ճումլայի մէջ, ուր նոյնպէս այդ աւազակը ինք զինքը յեղափոխական ներկայացուցեր էր:

Աւազակը Վառնա կը բերին և կը դատաւարտեն: Բայց յանկարծ կառավարութիւնը կը սկսի նոր ձերբակալութիւններու և խուզարկութիւններու: Կը ձերբակալուին երեք երիտասարդներ, մէկն ալ Սօֆիայէն կը բերուի: Յետոյ կը պարզուի որ այդ աւազակը կառավարութեան կը յայտարարեն թէ՛ ինք և՛ այն երիտասարդներ թուրք հօճա մը սպաններն են: Եւ զեւ ուրիշ մէկ մըն ալ պիտի սպանեն եղբոր: Կառավարութիւնը իր պարտականութիւնը կատարելէ յետոյ անմիջապէս երիտասարդները արձակեց, տեսնելով աւազակին շքարարութեան բոլորովին անհիմն ըլլալը:

#### Ռ Ո Ւ Ս Ի Ա

Մարտ 18ին Մոսկուայի ոստիկանապետը կընդունի խնդրամատոյց մը՝ օրիորդ Ալէքս: Օրիորդը իսկոյն արքայազն կը հանէ և կուզէ պարպել ոստիկանապետին վրայ, բայց վերջինս ճարպիկ գտնուելով օրիորդի ձեռքը կը բռնէ:

— Կառավարութիւնը կը պատրաստուի Գերմանիոյ մէջ խոչոր փոխառութիւն մը կնքել: Ռուսիոյ այդ քայլը Ֆրանսացիներու վրայ գէշ ազդած է:

#### Գ Ա Ր Ա Տ Ա Ղ

Թուրք կառավարութիւնը ինչպէս անցեալ անգամ հազորդեցինք, զօրքը կը համախմբէ Մակեդոնիոյ մէջ: Ասոր հանգէպ Ղարաաղղիք ալ կը պատրաստուին: Զօրապետները Զետինէ հաւաքուած են և խորհուրդ կընեն: Ըստ անգլիական թերթի մը՝ Իքէքի մէջ Պուլկարները շատ կը նեղուին թուրքերէն և շատ հաւանական է որ Ղարաաղղիք օգնութեան շտապեն: և եթէ պետութիւններ ժամանակ չըտայեն միջամտելու, Պալքանեան թերակղզին պիտի հրգեհուի:

#### Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Շալք-Պուրկէրէ ճիգերը նախագահ Շթէյնի հետ տեսնուելու համար դեռ հետեւեալ մը հասած չեն որովհետեւ չը գիտցուի թէ Նթէյն և Տուէտ շօրավարը ուր գացեր են:

— Հոլանտայի նախարարապետը Գերմանիա գացեր է: Կը կարծուի թէ Գերմանիոյ կայսրէն պիտի խնդրէ միջամտելու խաղաղութեան համար:

— Բրեթերիայէն կը հազարոյն որ Շալք-Պուրկէր և Թրանսիլվա ժամանակաւոր կառավարութեան միւս անդամները յաջողք են տեսակցութիւն ունենալ Օրանի նախագահ Շթէյնի հետ:

#### Ս Մ Ե Ր Ի Կ Ա

Ֆիլադելֆիայի քաղաքային վարչութիւնը 2 ու կէս միլիոն ֆրանք ծախսելով թուրքախառններու համար մասնաւոր հիւանդանոց մը շինեց է: Հիւանդանոցը 500 անձի համար է:

Պատերը պէտք է ապակիներով ծածկուին, ամեն մէկ հիւանդի համար առանձին սենեակ պիտի ըլլայ: Օպը պիտի մարտի օգոնի միջոցաւ:

#### Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Քանի մը հազար բժիշկներ երեսփոխանական ժողովին աղերսագիր մը տուեր են, որով կը խնդրեն ժանտախտէ ստեղծած բոլոր կենդանիներու դիակները այրել, որովհետեւ անոնց չայրուիլը շատ վնասակար է մարդոց համար: Աղերսագրի մէջ մանրամասնօրէն բացատրուած է թէ որչափ կամաց կը փոտին այդ դիակները հողի մէջ թաղուած պարագային, Առողջապահական տեսակէտով որչափ որ այդ փոտումը շուտ կատարուի, այնքան վտանգը քիչ է մարդոց համար: Ամենէն աղէկ միջոցը այրելն է:

#### Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Մանչուրիոյ վերաբերեալ դաշնակցութեան հիմնական պայմանները հաստատուած են և ստորագրուելուն կուպան:

Երեք նահանգներու ուսուցիչ պարպումը տեղի պիտի ունենայ երեք ժամանակամիջոցի մէջ յաջորդաբար, սկսեալ ստորագրութեան օրէն:

— Բէքինէն կը հազորդեն որ կաթոլիկ հաստատութիւններուն պատճառած վնասի փոխարէնը վճարելու համար Չիլի մէջ սկսած են տուրք հաւաքել: և առ եղած է խոչովութիւններու պատճառը՝ շատ մը սպաննուածներ կան:

#### Ա Ձ Դ

«Բնաշխարհիկ Բառարանի» ներկայ չորրորդ պրակը հրատարակած ժամանակ կը փութամք յայտնելու յարգոյ բաժանորդաց որ հինգերորդ պրակն ալ լոյս պիտի տեսնէ յուլիսի

մէջ: Նոյնպէս բազմաթիւ նորանոր պատկերներով զարդարուած: Մինչ նոյն ժամանակ կը յայտարարենք, թէ Բառարանիս տպագրուած 500 օրինակներն սպառած են, և բազմաթիւ բաժանորդ գրուել փափագողաց խնդրանաց դոհացումն տալու նպատակաւ: Բառարանիս Ա. հատորն աւարտելէ վերջ՝ որ պիտի պարունակէ Ա-2 տառը՝ միջին հաշուով 1000 էջ, երկրորդ հատորն պիտի սպենք 1500 օրինակ, 500ը հին բաժանորդաց համար եւ 1000ը նորերու: Ուստի որոնք որ կը փափագին Բառարանիս ունենալ, կրնան այժմէն իսկ բաժանորդ գրուիլ Բ. հատորի պրակներուն, յայտնելով մեզ իրենց ճիշդ հասցէն, որ ըստ այնմ արձանագրուէ մեր բաժանորդաց տետրի մէջ: Բառարանիս Բ. հատորը անմիջապէս աւարտելէ վերջ պիտի վերստին տրուենք Ա. հատորը՝ նոր բաժանորդաց համար, որուն տպագրութիւնը կարելի է աւարտել մէկ տարուան շրջանի մէջ: Նոր բաժանորդները փոխանակ գրումն այժմէն ուղարկելու, կրնան սպասել մեր նոր յայտարարութեան: այժմ բաւական է որ բարեհաճին մեզ իմացնել իրենց հասցէն եւ թէ քանի օրինակ կուզեն ունենալ, որպէս զի ըստ այնմ տպագրելի օրինակաց թիւն շտայնենք կամ հուշագրենք:

Տեսչութիւն տպագրատան  
Հասցէ—Էմբրիմէրի Արմէնիէն  
Ս. Ղազար Վէնէտիկ (Իտալիա)

40ՇԻԿԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ  
—  
Հայրապետ Սարգսեան «Բրէսլավ» կապ մեծ պողոտային վրայ:  
Ամենաընտիր ապրանքէ պատրաստի եւ մասնաւոր պատէրով կօշիկներ: զները չափաւոր: Վառնա թէ յաճախորդները գոհ պիտի մնան ամեն կերպ:  
Վառնա 7

**L'EUROPEEN**  
—  
Շարժաթիւթ քաղաքական, միջազգային իրաւունքի, ընկերական հարցերու, գրական և զեղարուեստական:  
Տարեկան 15 ֆր.  
Վեցամսեայ 8 ֆր.  
Հասցէ 24 rue Dauphine Paris Vj

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ ՄԻՈՒԹԻՒՆ  
—  
Եւրոպայի Հայ. Ուս Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ գիմում ընելու համար պէտք է գիմու հետեւեալ հասցէով  
Ինիոն sk Զէդիսիս Եւր.  
Լ'Եօրոք յիւ ռը Լ'Էֆօլ ռը Եիլի  
Սուիս Ժընէվ  
Կարգադիր Յաննաճոյղով

Գ Ո Ւ Թ Ա Ն  
—  
Հակոբ աւետայ, հոյազոր ծախիկ, գիտական եւ արուեստագիտական Հիմնադիր տնօրէն  
Գարեգին Ը. Մեմուրեան  
Հրատարակուած է Ըրգ թիւը:  
Հասցէ կան ընդանդակութեամբ:  
Տարեկան բաժնեգրին 12 ֆր. դիմել հիմնադրին, 23 rue de la Գօլօթի

ОТГОВОРНИКЪ  
Мурадъ-Ераносянъ  
Печ. Взаимность — Варна